ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4(45), 30 մայիսի, 2022թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԱՄՆ-ՈՒՄ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մայիսի 14-ից 22-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատվիրակությունը ՀՀ ոստիկանության պետի հրամանով և ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության ծրագրի (ICITAP) օժանդակությամբ գործուղվել էր ԱՄՆ Տեխաս նահանգի Ֆորտ-Ուերտ քաղաք՝ Իրավապահ մարմինների ղեկավարների միջազգային ասոցիացիայի (IADLEST) հերթական տարեկան համաժողովին մասնակցելու նպատակով:

Պատվիրակության կազմում էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը, Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը և Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Սուքիասյանը: Համաժողովին մասնակցել են նաև ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության ծրագրի (ICITAP) Հայաստանի գրասենյակի ներկայացուցիչները:

Համաժողովի ընթացքում քննարկվել են իրավապահ մարմիններում առաջնորդության, ոստիկանության աշխատակիցների հոգեկան առողջության և ֆիզիկական պատրաստականության ստանդարտների, մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ գործերով քննության ընթացքում զոհակենտրոն մոտեցման, սցենարների վրա հիմնված ուսուցման մեթոդաբանության և այլնի վերաբերյալ հարցեր:

Կրթահամալիրի պատվիրակությունն այցելել է նաև ԱՄՆ Տեխաս նահանգի Հյուստոն քաղաքի ոստիկանության ակադեմիա, որտեղ հանդիպում է ունեցել Հյուստոնի ոստիկանության դեպարտամենտի ղեկավարի, ինչպես նաև ակադեմիայի անձնակազմի հետ, ծանոթացել ակադեմիայի ենթակառուցվածքներին, տեխնիկական հագեցվածությանը, իրականացվող ուսումնական ծրագրերին, դասավանդման մեթոդաբանությանը, ներկա են գտնվել մի շարք տեսական և գործնական պարապմունքներին:

ԿԱՅԱՑԱՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում այսօր տեղի ունեցավ «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս» ուսումնական ձեռնարկի շնորհանդեսը: Ձեռնարկը հեղինակել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ Գ. Գրիգորյանը և քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Դ. Թումասյանը:

Ինչպես իրենց խոսքում նշեցին հեղինակները՝ սույն ձեռնարկի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունմամբ և «Քրեական իրավունք» առարկայի ուսումնամեթոդական բազայի պատշաճ ապահովմամբ:

Ուսումնական ձեռնարկն օգտակար կլինի ինչպես իրավաբանական բուհերի ուսանողների, այնպես էլ պրակտիկ աշխատողների, դասախոսների և քրեաիրավական հարցերով հետաքրքրվող այլ անձանց համար:

Կրթահամալիրի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ, Մ. Մուրադյանը, շնորհավորելով ձեռնարկի հեղինակներին, հույս հայտնեց, որ այս աշխատությունը ջերմորեն կընդունվի ուսանողական և գիտական հանրության շրջանակներում, կնպաստի ուսանողների քրեական իրավունքի ոլորտի գիտելիքների պատշաճ յուրացմանը:

Շնորհանդեսին մասնակից ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմն իր շնորհավորական խոսքն ուղղեց հեղինակներին՝ մաղթելով ստեղծագործական աշխատանքում նորանոր ձեռքբերումներ:

Վերջում հեղինակները շնորհակալություն հայտնեցին Կրթահամալիրի պետին, գրախոսներին և պրոֆեսորադասախոսական կազմին՝ իրենց արժեքավոր խորհուրդներով և նկատառումներով ձեռնարկի պատրաստմանն օժանդակելու համար:

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Մայիսի 31-ին ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Հովհաննես Գրիգորյանի ուղեկցությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիր էին ժամանել Չեխիայի Հանրապետության անվտանգության ուժերի գլխավոր տեսչության պատվիրակության ներկայացուցիչները հետևյալ կազմով՝ տնօրեն, բրիգադի գեներալ Ռադիմ Դրագուն, փոխտնօրեն, գնդապետ Վիտ Հենդրիխը, ԱՈՒԳՏ պաշտոնյա, գնդապետ Լիբոր Գրեպլը, իրավական և արտաքին գործերի բաժնի ղեկավար Յոզեֆ Յեժեկը:

Հյուրերին դիմավորեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը, պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը և ղեկավար կազմը:

Կրթահամալիրի պետի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին տարածքով, եղան ոստիկանության թանգարանում, մարզադահլիճում, նաև այցելեցին փորձակայան, այնտեղ Կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Սեմերջյանը տեղեկացրեց իրականացվող դասընթացների և գործնական պարապմունքների մասին: Հանդիպումը շարունակվեց Մ.Մուրադյանի աշխատասենյակում, որտեղ կողմերը քննարկեցին նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում մեկնարկեց աշխատակիցների համար նախատեսված անգլերենի ուսուցման դասընթացը, որն իրականացվում է եվրոպական բարձրագույն կրթական տարածքի չափորոշիչներին համապատասխան:

Կրթահամալիրի աշխատակիցների համար օտար լեզվի ուսուցման դասընթացը նախատեսված է Կրթահամալիրի 2022-2026 թվականների ռազմավարական պլանի և գործողությունների կատարման ժամանակացույցով: Աշխատակիցների նախապես ձևավորված խումբը լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով կանցնի քառամսյա դասընթաց, որը կազմակերպվել է Կրթահամալիրի վերապատրաստման կենտրոնի ու կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի կողմից՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի շարունակական կրթության բաժնի համագործակցությամբ:

Դասընթացի մեկնարկին ներկա էր Կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Մ.Մարկոսյանը: Ողջունելով կազմակերպիչներին և մասնակիցներին՝ նա հույս հայտնեց, որ այս համագործակցությունը շարունակական բնույթ կկրի: Նշեց նաև, որ Կրթահամալիրում պարբերաբար իրականացվել են լեզվի ուսուցման դասընթացներ, որոնք միտված են եղել աշխատակիցների օտար լեզվի գիտելիքների զարգացմանը: Պարոն Մարկոսյանը հավելեց նաև, որ այսուհետ Կրթահամալիրը լեզվի ուսուցման դասընթացները կիրականացնի ըստ ընտրված թիրախային խմբերի, և դասընթացի ավարտին կտրվի օտար լեզվի համապատասխան մակարդակը հավաստող փաստաթուղթ:

«ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ, ՏԱՆԵԼԻ ԿԵԱՆՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

ԶՐՈՒՅՑ ՆԳ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ

«Առաւօտ վաղ հեռուից լսւում է «կոչնակի» ձայնը: Ժամկոչ է: Քրիստոնեայ հաւատացեալներին եկեղեցի հրաւիրելու համար զանգակ գործածելու իրաւունք չկար, այլ «կոչնակ» էին զարնում, որի ձայնը թոյլ է եւ մնում է նոյն փողոցի մէջ...Եւ ի՜նչ անուշ երգում էր ինչ որ եկեղեցական մեղեդի, այս գիշերային լռութեան մէջ, Այգեստանի ծառախիտ ու մութ փողոցներում, որոնց լռութիւնը խանգարում են միմիայն առուների վազող քրքջացող ջրերը... » (Արամ Մանուկեան, «Յուշէր», 1916թ.):

Երևան, մեր օրեր: Դպիրներն արդեն կոչնակի փոխարեն զանգակով են հրավիրում ժամերգության, փողոցները մշակված, լուսավոր, կոկիկ ու անվտանգ են:

Մեկ դար առաջ էր՝ 1918թ. հուլիսի 26-ը, երբ դժվար ժամանակներում պետականության ղեկն իր ուսերին վերցրած գործիչ Արամ Մանուկյանն ստանձնեց նաև Ներքին գործերի նախարար լինելու առաքելությունը՝ այդպիսով սկիզբ դնելով ՆԳՆ և ՀՀ ոստիկանության նորագույն պատմությանը: Ապահովության ու անվտանգության վերականգնումը վստահված էր միջին տարիքի խիստ, զուսպ ու աչալուրջ հայացքով այս մտավորականին. «Խաղաղ-մշակութային զարգացում հնարաւոր է միայն այն երկրներում, ուր որ կայ կեանքի, գոյքի ապահովութիւն...» (Արամ Մանուկեան, «Յուշէր», 1916թ.):

Պատկերացնենք մի պահ, որ այս անվտանգ ու կանոնակարգված փողոցներով քայլում է հենց Արամ Մանուկյանը: Փորձենք զրուցել:

-Բարև՛ Ձեզ, պարո՛ն Մանուկյան (պատվի առնելով ողջունում եմ): Պետության ակունքներում կանգնած գործիչը կենցաղում զուսպ էր ու համեստ: Ինչպե՞ս էիք սկսում Ձեր առավոտյան նախաճաշը:

-Բարեւ: Առաւօտեան՝ թեյ, պանիր, հաց էր, իսկ կէսօրին՝ մեկ կամ երկու տեսակ կերակուր... բաւական էր (Արամ Մանուկեան, «Յուշէր», 1916թ.):

-Ինչի՞ քաղց էիք զգում:

-Մտաւորական մարդկանց սով է: Պետք է խոստովանել ե՛ւ այն, որ խմբի զինուորները ժամանակի մեծ մասն անցընում էին կարդալով (Արամ Մանուկեան, «Յուշէր», 1916թ.):

-Ձեր ծննդավայր Դավիթ Բեկից մինչև Վան: Սիրում էիք ճամփորդել ու այն զուգորդել ուսուցմամբ, դասավանդմամբ, հասարակական ակտիվ գործունեությամբ: Ամենաշատը տպավորվել ու հարազատ է դարձել, սակայն, Վանը՝ ղեկավարելով նաև տեղի ինքնապաշտպանական մարտերը: Ինչո՞ւ հենց Վանը:

-Առաջին անգամ դէպի Վան ճանապարհորդութիւնը կատարուեցաւ շատ բացառիկ պայմանների տակ: Սասունի անժամանակ ժայթքումը, իմ մերձաւոր ընկերների նահատակութիւնը ինձ դրել էին յուսահատ կացութեան մէջ: Կարս եկող բազմաթիւ երիտասարդներին համոզում էի, որ Սասուն գնանք: Ինձ երեւի այնտեղ քաշողը դպրոցական ընկերներս էին: Ես այդպիսով «թունդ սասունեան» էի: Եւ, ընդհակառակը, «թունդ վանեան» էր Կարս եկող մի նոր երիտասարդ, ապագայ Մուշ-Սասունի Ռուբէնը, որ ճեմարանում ընկերական կապերով կապուած էր վանեցիների հետ: Ինձ հետ երկար վիճում էր Վանի առաւելութիւնների մասին եւ համոզում, որ միասին Վան գնանք: Դէպքերը այնպէս դասաւորուեցին, որ «թունդ վանեան» Ռուբէնը գնաց Մուշ, իսկ ես՝ «թունդ սասունեանս», մեկնեցի Վան (Արամ Մանուկեան, «Յուշէր», 1916թ.):

-1916-1917թթ. վերադառնալով Երևան՝ հայտնի էիք որպես գաղթականների խնդիրներով զբաղվող ու մտահոգ գործիչ: Ինչի՞ կարիքն ամենաշատն ունեին ընտանիք, տուն ու հայրենիք կորցրած գաղթականները:

- Ձուրկ ծնողներից եւ կարեկցող մերձաւորներից՝ մեր արնոտ իրականութեան այդ անմեղ զոհերը, օրերով քաղցած, ուժասպառ, յաճախ ընկնում են անշնչացած եւ մահուան գրկի մէջ գտնում այն սփոփանքը, որ ի զուր իրենց դալուկ ձեռները երկարած աղերսում էին աւելի կուշտերից եւ աւելի բախտաւորներից: Նրանց համար անկողին, հագուստ ու մթերք պետք է նուիրաբերենք, փրկենք խեղճ որբին, որ հաց է աղերսում, պատսպարան որոնում եւ մեր գուրգուրանքն է երազում (Արամ Մանուկեան, 07.10.1918թ. գրառումներ, «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ):

-1918թ. հուլիսին դարձաք ՀՀ Ներքին գործերի նախարար: Առաջնային ի՞նչ խնդիրներ էիք դրել ձեր առջև:

-Երկրում կարգ ու կանոն եւ տանելի կեանք ստեղծելը (Ա. Ասրյան «Արամ Մանուկյանի ծննդյան 140-ամյակի առթիվ», 1991թ.):

- Ի՞նչ հատկանիշներով է օժտված հայը:

-Մեր ժողովրդի տիպարը համեստ, աշխատասէր, շինարար եւ լռակեացն է: Ժողովուրդների երջանկութիւնը պայմանաւորուում է նրանց ինքնօգութեան բնազդով եւ ստեղծագործող աշխատունակութեամբ: Առաւել եւս այդ յատկութիւնները պէտք է յատնաբերէ մեր ժողովուրդը (Արամ Մանուկեան, 07.10.1918թ. գրառումներ, «Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ):

-Շնորհակալութիւն:

Միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Անի Ղուկասյան

ԱՎԱՐՏՎԵՑ ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԸ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհուրդը մարտական և ֆիզիկական պատրաստականության ամբիոնի հետ համատեղ կազմակերպել էր մինի ֆուտբոլի հուշամրցաշար՝ նվիրված 44-օրյա պատերազմում զոհված սովորողների հիշատակին: Մայիսի 26-ին կայացավ հուշամրցաշարի եզրափակիչ փուլը: Առաջին տեղի համար պայքարում էին ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման երկրորդ և երրորդ կուրսի սովորողները: Գեղեցիկ պայքարի արդյունքում երրորդ կուրսը 10:3 հաշվով հաղթեց երկրորդ կուրսին՝ զբաղեցնելով առաջին հորիզոնականը:

Հուշամրցաշարի մրցանակակիրներին մեդալներով և պատվոգրերով պարգևատրեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Մ.Մարկոսյանը: Պայքարի արդյունքում 1-ին հորիզոնականն զբաղեցրեց ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման 3-րդ կուրսը, 2-րդ հորիզոնականը՝ ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման 2-րդ կուրսը, իսկ 3-րդ հորիզոնականը քոլեջի ոստիկանական և միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի 2-րդ կուրսինն էր:

Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման 2-րդ կուրսի սովորող Հովհաննես Մամիկոնյանը պարգևատրվեց «Լավագույն խաղացող» մեդալով:

Հաղթող թիմին Մ.Մարկոսյանը փոխանցեց նաև հուշամրցաշարի փոխանցիկ գավաթը:

Շնորհավորում և նորանոր հաղթանակներ ենք մաղթում մեր սովորողներին:

ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ՝ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Լույս է տեսել լեզուների ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Հայրապետյանի «Թմրամիջոցներ և առնչվող արտահայտություններ» հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարանը: Այն նախատեսված է ՀՀ և ԱՀ ոստիկանության և տվյալ բնագավառին առնչվող իրավապահ այլ կառույցների ծառայողների համար: Բառարանը կարող է օգտակար լինել նաև ոլորտը նոր ուսումնասիրող՝ ոստիկանության կրթահամալիրի ուսանողներին:

Բառարանում ընդգրկված են ՀՀ-ում առավել տարածված թմրամիջոցներին, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերին, ինչպես նաև դրանք գործածող անձանց վերաբերող՝ պրակտիկայում հաճախ կիրառվող բառեր և արտահայտություններ:

Տրված անգլերեն համարժեքներն ուղեկցվում են գրադարձություններով, ինչը թարգմանությունների ժամանակ հնարավորինս կհեշտացնի լեզուն չիմացող մասնագետների ճիշտ արտասանությունը:

Բառարանն ուղեկցվում է նաև առավել հայտնի թմրամիջոցների գունավոր պատկերներով, որը ոլորտում ծառայության անցած նոր մասնագետներին ավելի ճանաչելի կդարձնի տվյալ բույսը և դրանից ստացվող թմրանյութը:

Հաշվի առնելով, որ թմրամոլությունը և թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը լուրջ վտանգ են ներկայացնում ոչ միայն անհատի, այլև ողջ հասարակության և պետության անվտանգության համար, ինչպես նաև աղետալի վնասներ են հասցնում մեր երկրի տնտեսությանն ու ազգի գենոֆոնդին, և ՀՀ-ում ու ԱՀ-ում իրավապահ մարմինների կողմից ակտիվ պայքար է մղվում դրանց դեմ, «Թմրամիջոցներ և առնչվող արտահայտություններ» հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարանը համեստ ներդրում և օժանդակություն է դարի չարիք հանդիսացող վտանգի դեմ պայքարի գործում:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Հունիսի 1-ը երեխաների պաշտպանության միջազգային օրն է: Օրն ազդակ է բոլոր մարդկանց ու հատկապես՝ ծնողներին, որ երեխաները հասարակության խոցելի խմբերից են և պահանջ ունեն ամենօրյա ուշադրության, սիրո և պաշտպանության: Երեխաների պաշտպանության օրը սահմանվել է 1925 թվականին Ժնևում երեխաների պաշտպանության համար հրավիրված համաշխարհային կոնֆերանսի ընթացքում: 1949-ին Կանանց ժողովրդավարական միջազգային դաշինքը երեխաների պաշտպանության օր անցկացնելու որոշում է ընդունել: Առաջին անգամ հունիսի 1-ը նշվել է որպես երեխաների պաշտպանության միջազգային օր 1950-ին: Հայաստանը Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան վավերացրել է 1992 թվականին, որից հետո 1996թ. ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը: Հունիսի 1-ը նշում են գրեթե բոլոր հետխորհրդային երկրները, բացի դրանից, վերջին տարիներին այս օրվան են միացել նաև եվրոպական երկրներ, ԱՄՆ մի շարք նահանգներ: Փոքրիկներին է նվիրված նաև երեխաների համաշխարհային օրը, որը նշվում է նոյեմբերի 20-ին:Հայաստանում հունիսի 1-ը փորձում են իսկական տոն դարձնել երեխաների համար մի շարք մշակութային և ժամանցային վայրեր: Կազմակերպվում են բազմապիսի միջոցառումներ մայրաքաղաքում և հանրապետության տարբեր շրջաններում: Ամեն տարի այս օրը քաղաքը գունավորվում է փոքրիկների գեղեցիկ նկարներով, լցվում ուրախ ճիչերով ու ծիծաղով:

Սիրենք ու անհոգ մանկություն ապահովենք մեր երեխաներին՝ մեր երկրային հրեշտակներին, որովհետև նրանք ոչ միայն մեր երեխաներն են, այլև ապագա բժիշկները, ֆիզիկոսներն ու քիմիկոսները, ծրագրավորողները, իրավաբանները, լրագրողներն ու պարզապես այս հասարակության կերտողները:

ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐ

* Մանուկները պարզ ու վճիտ առվակներ են, որոնք մեծերը կարող են պահել զուլալ կամ պղտորել:

Կարինե Հարոյան

* Մեծահասակները մանուկներից ավելի շատ բան ունեն սովորելու:

Լալա Գինոսյան

* Երեխաները սիրո երջանկության խորհրդանիշ են:

Հասմիկ Ղանդիլյան

* Երեխայի հոգին նման է թաց կավի, որի ճարտարապետը ծնողն է:

Ռուզաննա

* Ոչինչ չի կարող գունավորել ու գեղեցկացնել կյանքը այնպես, ինչպես երեխաները:

Էլեոնորա Հախնազարյան

* Երեխաներն են աշխարհին նրբերանգներ տալիս:

Ռուզաննա Ստեփանյան

* Երեխան սիրո, ջերմության, անկեղծության ու հավատարմության խորհրդանիշն է:

Ժաննա Տեփանոսյան

* Երեխաները մեզ տեղափոխում են մանկություն:

Սերոբ Թևոնյան

* Եթե անհրաժեշտ լինի խոսել կյանքից, ես կսկսեմ երեխաներից:

Անի Ավոյան

* Այն տունն է հարուստ, որտեղ մանկան ճիչ կա:

Արման Ներսիսյան

* Մանուկները մեր դեմքին ժպիտներ են նկարում:

Արթուր

* Հայրենիքի խաղաղության երաշխավորները մեր երեխաներն են:

Կորյուն Ալեքյան

* Ո՞վ է ասում՝ աշխարհում հրաշքներ չեն լինումգ չմոռանանք բալիկներին:

Մանե Խուդոյան

* Երեխան Աստծուց տրված սրբություն է:

Նվեր Ստեփանյան

* Երեխաները մեր ծաղկուն ապագան են:

Ավետիս Սարդարյան

* Երեխաներին ավելի շատ օրինակներ են պետք, քան խորհուրդներ:

Գոռ Մանուկյան

* Երեխաները մեր երջանկության մեխանիկան են:

Արթուր Խաչատրյան

* Մանկան ճիչը եկեղեցու զանգերի նման արդար ու սուրբ է:

Ալլա Պետրոսյան

* Երեխաների ճիշտ դաստիարակությամբ է պայմանավորված ապագայի բարեկեցությունը:

Վարդան Իսրայելյան

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԹՌՉՈՒՆ

Ֆիլոմենո անունով մի ոստիկան շատ խորամանկ ու խելացի թռչուն ուներ, որին նա մարզել էր տարիներ շարունակ: Թռչնի վանդակը միշտ բաց էր, և թռչունն ազատ ելումուտ էր անում:

Մի գիշեր գողերը ներխուժեցին Ֆիլոմենոյի առանձնատունը: Նրանք այնքան զգույշ էին գործում, որ քնած Ֆիլոմենոն չզգաց էլ, թե ինչ է կատարվում: Սակայն ոստիկանի զգոն թռչունն անմիջապես դուրս եկավ վանդակից, ծլվլալով հարձակվեց գողերի վրա և սկսեց կտցահարել՝ ստիպելով նրանց խուճապահար ճողոպրել: Ֆիլոմենոն արթնացավ, բայց չհասցրեց անգամ տեսնել, թե ինչպես են կողոպտիչները սարսափահար փախչում աստիճաններով:

-Իմ թռչու՛ն, վաղը դու կգաս ինձ հետ ոստիկանական բաժանմունք՝ աշխատելու, - ասաց Ֆիլոմենոն,- և դու կլինես աշխարհի առաջին ոստիկան թռչունը:

Երբ ոստիկանության աշխատակիցները տեսան Ֆիլոմենոյին՝ թռչունը ուսին, շատ զարմացան և սկսեցին կատակներ անել ու ծիծաղել Ֆիլոմենոյի այդ քայլի վրա:

-Մի՛ անհանգստացիր, փոքրի՛կ թռչուն, ժամանակ կունենաս ապացուցելու, թե որքան սխալ են այս բոլոր խելացի ոստիկանները, - իր սիրելի թռչնին քաջալերում էր Ֆիլոմենոն:

Նույն օրը առևտրի կենտրոնում կողոպուտ էր: Անվտանգության աշխատակիցները փակել էին շենքը, իսկ գողերը հայտնվել էին թակարդում: Առևտրի կենտրոնը շատ մեծ էր, իսկ գողերի այնտեղ գտնվելը՝ խիստ վտանգավոր: Պետք էր արագ գործել և ձերբակալել նրանց: Բայց, ցավոք, ոչ ոք չգիտեր, թե որտեղ են պատսպարված գողերը: Շներն անգամ չկարողացան գտնել հանցագործներին:

- Քո հերթն է, փոքրի՛կ թռչուն, - ասաց Ֆիլոմենոն:

Փոքրիկ թռչունը թռավ և մտավ առևտրի կենտրոն: Քիչ անց նա դուրս եկավ և սկսեց շատ բարձր ծղրտալ: Ֆիլոմենոն երկու ոստիկանների հետ հետևեց թռչնին, և մի քանի րոպե անց Ֆիլոմենոն և ուղեկցող ոստիկանները հանցագործներին ձեռնաշղթաներով դուրս հանեցին առևտրի կենտրոնից: Փոքր թռչունը նրանց շատ լավ թաքնված էր գտել:

Այդ օրը գործընկերները մեծարանքի խոսքեր շռայլեցին Ֆիլոմենոյին և նրա հնարամիտ թռչնին, որը ոստիկանության բաժանմունքի «ծառայող» ճանաչվեց իր վաստակի համար:

Ֆիզիկական պատրաստականություն

ԿՈՒԼՏՈՒՐԻԶՄ-ՈՒԺԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Պատմական բոլոր դարաշրջաններում, մարդկության քաղաքակրթության զարգացման բոլոր փուլերում աշխատանքի հետ զուգահեռ ֆիզիկական կուլտուրայի առանձին տարրեր միշտ էլ օգտագործվել են և ծառայել որոշակի նպատակների: Այսինքն՝ մարդու աշխատանքային գործունեությունը և ֆիզիկական կուլտուրայի տարրերը որոշակի վերապահումով կարող ենք ասել, որ իրար հասակակից են, իհարկե, առաջնայինը համարվում է աշխատանքը:

Աշխատանք: Ահա այն հենաքարը, որի վրա պետք է ծածանվեն ձեր կյանքի հաջողությունների բոլոր դրոշները, իսկ եթե դրան ավելացվում է մարզում, այն էլ կոնկրետ մարզաձևով, ապա դուք նախանշել եք ձեր ուղին: Իսկ եթե դուք անդամագրվել եք ուժային մարզաձևերին (ծանրամարտ, ուժային եռամարտ, կշռաքարային սպորտ, աթլետիզմ, արմռեսլինգ), ապա հստակ պատկերացնում եք այն մակարդակը, որին պետք է հասնեք որոշ ժամանակ անց, իսկ դրանց ծանոթ լինելու համար նախապես պետք է ծանոթ լինեք տվյալ մարզաձևի պատմական զարգացման կարևոր փուլերին, նրանց դերին և նշանակությանը ֆիզիկական դաստիարակության ընդհանուր համակարգում, նրանց ժամանակակից նվաճումներին, ուղղություններին և այլն:

Ամեն մի անձ հատկապես երիտասարդ տարիքում ցանկանում է լինել ուժեղ, դիմացկուն, բարետես, ներդաշնակ, զարգացած, ունենա աթլետիկ կազմվածք: Սակայն եթե ճշմարտացի լինենք և իրականությունը չգունավորենք, ապա դրանց հասնելու պատկերն առավել տխուր և ցավալի է, քան մենք տեսնում ենք կամ ներկայացնում: Իսկ այդ ամենի պատճառն այն է, որ դպրոցական ծրագրերում ուժային վարժություններին քիչ տեղ է հատկացվում, և միայն խաղերով, աթլետիկայով կամ մարմնամարզությամբ պատշաճ ֆիզիկական պատրաստության ապահովումը դառնում է անհնարին: Այսինքն՝ այն հիմքը, որը շաղախված է մկանային ուժով, ուժային դիմացկունությամբ, արագաշարժությամբ, և որի վրա պետք է կազմավորվեն մյուս շարժողական ընդունակությունները՝ ճարպկություն, ճկունություն, կոորդինացիա, բացակայում են: Եվ եթե դուք ձեր դպրոցական տարիներին չեք ստանում ուժային պատրաստություն, ապա այդ բացը ոչ լիովին, բայց կարելի է լրացնել ուսումնական հաստատություններում կամ զինվորական ստորաբաժանումներում: Սա լոկ ցանկություն չէ, այլ ցանկալի անհրաժեշտություն է, հատկապես՝ զինվորականի համար:

Ֆիզիկական վարժություններով զբաղվելը բարձրացնում է օրգանիզմի պաշտպանողական ակտիվությունն ամեն տեսակ հիվանդությունների հանդեպ և նպաստում աշխատունակության պահպանմանը մինչև կյանքի խոր ծերություն:

ՈՒԺ. երկտառանի այս բառի մեջ ի՜նչ մեծ իմաստ կա, ինչպիսի՜ մոգական ձգողականություն հանդեպ այն անձը, որն ուժեղ է, որը հասել է բարձր արդյունքների...

Ուժեղ մարդ. ինչպիսի՜ հարգանք ու մեծարում կա նման անձանց նկատմամբ, ինչպիսի՜ վերաբերմունք ու բարի ցանկություն նմանվելու տվյալ անհատին...

Գեղեցիկ կեցվածք. ամեն մի անձ ցանկանում է ունենալ մարմնի համաչափ զարգացած մկանային կազմվածք:

Կուլտուրիզմ

Կուլտուրիզմը (որն իր մեջ ընդգրկում է մարմնի գեղեցկության ցուցադրում) վերջին տարիներին լայն տարածում է գտել աշխարհի բազմաթիվ երկրներում: Դարեր ի վեր մարդիկ միշտ էլ ցանկացել են լինել ուժեղ, առողջ, ունենալ մարմնի ներդաշնակ զարգացվածություն, համաչափ քայլվածք, հպարտ կեցվածք... բարոյական-մային բարձր հատկանիշներ:

Աթլետիզմի վարժությունների շրջանակները բավականին լայն են՝ ծանրաձողեր, կշռաքարեր, կցագնդեր, սկավառակներ, վարժագործիքներ, տարբեր ժապավեններ և այլն: Իսկ վարժությունների կատարումը, համեմատած վերոհիշյալ մարզաձևերի հետ, ավելի մատչելի է, որով կարող են զբաղվել տարբեր տարիքի և սեռի բոլոր ցանկացողները: Այստեղ հիմնականում գլխավոր կամ առաջատար միջոցներն են վարժագործիքները՝ մի կարևոր տարբերիչ կողմ մյուս մարզաձևերի համեմատ: Պարապելով կուլտուրիզմով՝ դուք ակամա ձեռնամուխ եք լինում ձեր մարմնի «վերաքանդակմանը», նրա արտաքին (ներքին օրգանները նույնպես) ռելիեֆի ձևավորմանը, ուժային կարողությունների ավելացմանը: Եթե ունեք մարմի շեղումներ, ավելորդ ճարպային կուտակումներ, այդ ամենը վերականգնվում է տվյալ մարզաձևով պարապելու ընթացքում: Եվ եթե դիտեք կուլտուրիզմի մրցումները, ապա դուք ուղղակի կզարմանաք նրանց մարմնի մկանների ահռելի չափերից, աթլետիկ կեցվածքից:

Սակայն, սիրելի՛ զինվոր, սպա և ուսանող, մեր նպատակը չէ, որ դուք հասնեք այդպիսի աստիճանի (դա ևս ցանկալի է, սակայն դուք հնարավորություն չունեք), բայց ցանկալի է, որ այդ վարժագործիքներից օգտվելու և մարզվելու կանոններն իմանաք, որ տվյալ մկանախմբերի համար պետք է կատարել կոնկրետ վարժություն համապատասխան վարժագործիքի վրա, իմանաք՝ ինչպես կատարել վարժությունը, ինչ տեմպով և ռեժիմով, ինչ քանակությամբ և հերթականությամբ, ինչպիսի ծավալով և լարվածությամբ և, որ ամենակարևորն է, կդառնաք ուժեղ, կոփված, և հաղթահարելի կլինեն ձեզ համար ցանկացած դժվարություն և խոչընդոտ:

Վարժագործիքները կօգնեն ձեզ, «կհուշեն», որ դուք ճիշտ կատարեք այս կամ այն վարժությունը:

Աշոտ Գրիգորյան
Մարտական, ֆիզիկական պատրաստականության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

Ոստիկանության գնդապետ Կարինե Կիրակոսյանը Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի տեղակալն է: Նա ոստիկանությունում երկարամյա փորձ ունեցող կին սպաներից է, ով միշտ աչքի է ընկել իր աշխատասիրությամբ, կարգապահությամբ, հայրենիքին ծառայելու նվիրվածությամբ, գիտելիքների և հմտությունների հարուստ պաշարով և ստեղծագործ մտքով: Վերջերս լույս տեսած «Լեռները հայոց» բանաստեղծությունների ժողովածուն նրա անհուն հայրենասիրության, անսահման մարդասիրության խոսուն վկան է:

Ստորև Ձեզ ենք ներկայացնում նրա երկու ստեղծագործությունները:

ՃԱՄՓԵՔՍ

Երազ ու թախի՛ծ փռեք ճամփեքիս,
Որ մորս ձայնը շուտ հասնի սրտիս,
Գնամ հարազատ իմ տունը տեսնեմ,
Վիրավոր հողիս կարոտն առնեմ:

Սրտակեզ երգե՛ր փռեք ճամփեքիս,
Որ չդադարի արցունքն աչքերիս,
Անցնեմ միայնակ դժվարին ուղին,
Միայն թե հասնեմ մեր սեգ լեռներին:

Վրեժ ու ցասո՛ւմ փռեք ճամփեքիս
Որ հերոսանա տառապած հոգիս,
Կանգնեմ շարքերում առյուծ տղերքի,
Դառնամ զինվորը պապերիս երկրի:

Անզիջում պայքա՛ր փռեք ճամփեքիս,
Որ հաղթանակի բանակը ազգիս,
Եվ որպես հուսո մեծ ուժի պատվար՝
Պատմության նոր էջ կերտի մեզ համար:

ՀԱՅԻ ՄՈՐՄՈՔԸ

Աշունը բացեց աչքերը դեղին
Ու թախծոտ նայեց կապույտ երկնքին,
Տեսավ սև ամպեր՝ մեր գլխին կախված,
Մահաբեր հողմեր, ցավոտ լուսաբաց:

Նորից դղրդաց հողը հայրենի,
Ոսոխը՝ գազան, բիրտ ու վայրենի,
Խաթարեց կյանքը լուսավոր մեր տան,
Թանկ դարձավ ժամը և ամեն վայրկյան:

Շուրջը կռիվ էր, ահագնող տագնապ,
Ամենուր ցավ էր, մորմոք ու սարսափ,
Քաջ զինվորները պայթող ռումբի տակ
Կռվեցին, ընկան վիրավո՜ր, մենա՜կ:

Ընկան տղերքը լուռ ու անաղմուկ,
Եվ կյանքը սառեց դեմքներին դալուկ,
Նրանց լռության անսահմանի մեջ
Մնացին խոսքեր՝ բազում ու անվերջ:

ԻՆՉ ԿԱՐԴԱԼ

10 բան, որ դետեկտիվ պատմությունները սովորեցնում են մեզ

Կարդալը, իհարկե, հրաշալի է, բայց հաճախ ծնողներին անհանգստացնում է, թե գրքերն ինչ են սովորեցնում: Ընթերցողների ժամանակը հետաքրքիր դարձնելուց բացի՝ շատ կարևոր է նաև, որ ստեղծագործությունները տան որոշակի արժեք: Այդ առումով բացառություն չեն դետեկտիվ պատմությունները, որոնց բազմաթիվ առավելություններից 10-ին կանդրադառնանք ստորև:

1. Դետեկտիվ պատմությունները սովորեցնում են ճիշտ մտածել: Դրանցում հանդիպող գլուխկոտրուկները յուրօրինակ ինտելեկտուալ մարզանք են մտքի համար:

2. Զարգացնում են տրամաբանությունը: Դետեկտիվ պատմություններում խուզարկուները հիմնվում են եզրակացությունների տրամաբանական շղթայի վրա, որի յուրաքանչյուր օղակը չափազանց կարևոր է ու նպաստում է խնդրի լուծմանը:

3. Օգնում են լուծումներ գտնել իրական կյանքում հանդիպող բարդ իրավիճակներում: Դետեկտիվ պատմություններում նկարագրվող շատ իրավիճակներ դառնում են կյանքի կարևոր ուղեցույց:

4. Ձևավորում են ստրատեգիական մտածողություն, մի քանի քայլ առաջ նայելու հմտություն: Պատահական չէ, որ խուզարկուների մեծամասնությունը հանճարեղ մտածող է: Բայց դրան հասնելն այդքան էլ բարդ չէ. նրանք էլ պարզապես զարգացրել ու ձևավորել են իրենց մտածողության այդ կերպը:

5. Զարգացնում են ուշադրությունը դետալների նկատմամբ: Իրական կյանքում նույնպես առաջին հայացքից մանրուք թվացող երևույթները, որոնք մենք հաճախ անտեսում ենք, կարող են մեծ ազդեցություն թողնել տարբեր իրավիճակներում: Իսկ խուզարկուներն ուշադրություն են դարձնում ամեն մի դետալի վրա՝ ցույց տալով, որ «ցանկացած անպատեհ թվացող մանրուքն անգամ ազդեցություն է ունենում ամբողջի վրա»:

6. Նպաստում են մարդու և նրա բնույթի ճանաչմանը: Այս պատմություններն օգնում են հասկանալ մարդու այս կամ այն արարքի դրդապատճառները: Խուզարկուները նաև հրաշալի հոգեբաններ են, որոնք մարդկային բնույթի ճանաչողության շնորհիվ կարողանում են լուծում տալ բարդ խնդիրներին:

7. Օգնում են տարբերել կարևորը երկրորդականից, հիշել միայն օգտակար տեղեկություններն ու արդյունավետորեն կիրառել դրանք: Ինչպես Շերլոք Հոլմսն է նշում՝ մարդու ուղեղի ձեղնահարկը էլաստիկ չէ, այն չի կարելի լցնել ամեն տեսակ աղբով ու չկիրառվող տեղեկություններով, այլ պետք է խնամքով կահավորել միայն անհրաժեշտ ու պետքական բաներով:

8. Զարգացնում են քննադատական մտածողությունը:

9. Լինելով առեղծվածային ու գաղտնիքներով լի՝ դրանք օգնում են զարգացնել նաև երևակայությունը, մինչև վերջին էջերը չիմանալով, թե ով է հանցագործը, կամ որն է գաղտնիքը, ուղեղում սկսում են ձևավորվել սեփական սցենարները:

10. Դետեկտիվ պատմությունները չափազանց հետաքրքիր են ու շատերի հետաքրքրությունն են շարժում ընթերցանության նկատմամբ:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության Կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 05. 2022թ.:

Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի: